



# ԿԱՅՈՒԹ

ՏԵՂԱՐՅՈՒՆՆԵՐԻ  
ՈՐՈՇՈՒՄ

Վստահելի տեղեկությունների փնտրտուքը» ստեղծվել է Ազգային առլիիովիզուալ ինստիտուտի,  
«Երիտասարդական տեղեկություններ և  
խորհրդատվություն» կազմակերպության,  
Ֆինանսիայի ԱԱԿ-ի ասոցիացիայի,  
Ֆինանսիայի լուսանկարչության թանգարանի  
և Իլե Օպպիմինենի կողմից համատեղ:



Համաֆինանսավորվել է  
Եվրոպական միության  
«Կապող Եվրոպական կառույց»  
ծրագրի կողմից



Սույն իրատարակության բովանդակության համար պատասխանատու է  
բացառապես Ազգային առլիիովիզուալ ինստիտուտը և պարտադիր չէ,  
որ այստեղ արտահայտված տեսակետները համընկնեն Եվրոպական միության դիրքորոշման հետ:

Սույն ուսումնամեթոդական ձեռնարկը թարգմանվել է Հանրային լրագրության ակումբի «Ավելի անվտանգ առցանց միջավայր» նախադպրոցական հաստատություններում մեղիագրագիտության ուղղությամբ միջամտություն» ծրագրի շրջանակներում, որը ֆինանսավորվել է ԱԱԾ պետքարտուղարության Հասարակայնության հետ կապերի գրասենյակի դրամաշնորհի շրջանակներում:

Այս ուսումնամեթոդական ձեռնարկում արտահայտված է հեղինակի դիրքորոշումը, որի համընկնումը ԱԱԾ պետքարտուղարության դիրքորոշման հետ պարտադիր չէ:



Նկարագրում՝ Լուսինե Խանդիլյանի  
Եջադրում՝ Շովինար Խաչատրյանի

# **Մեղիսկորթության նյութ՝ գիտության ու տեղեկատվության մասին**

## **Ներածություն**

Որտեղից գտնել ինֆորմացիա: Ինչպես գնահատել դրա վստահելիության աստիճանը: "Կեղծ լուրեր" տեսել եք արդյոք: Ո՞րն է վստահելի ինֆորմացիայի և գիտության նշանակությունը հասարակության մեջ և որպես առօրյա կյանքի մաս: Ի՞նչ տարբեր ձևերով կարելի է ուրիշներին պատմել իրադարձությունների մասին և կիսվել տեղեկություններով:

Վստահելի տեղեկությունների փնտրությունը իր մեջ պարունակում է բազմապիսի առաջադրանքներ և քննարկման թեմաներ:

Ըստ ավանդական տեսակետի՝ գիտելիքը կարող է ընկալվել որպես լավ հիմնավորված, ճիշտ համոզմունք:

Յամացանցի և մեդիայի տարածման միջոցով մենք ինարավորություն ունենք ստանալ անսահման մեջ ծավալների ինֆորմացիա: Յասանելի ինֆորմացիայի ծավալների աճին զուգընթաց աճում է նաև այն գտնելու և կառավարելու, ինչպես նաև վերջինիս վստահելիությունը գնահատելու համար անհրաժեշտ հմտությունների կարևորությունը: Ինֆորմացիան մեզ օգնում է հասկանալ ինքներս մեզ, ուրիշներին և մեզ շրջապատող աշխարհը:

"Վստահելի տեղեկությունների փնտրություն" նյութի վարժությունները անդրադառնում են ինֆորմացիայի աղբյուրների վստահելիության ստուգմանը և տարբեր մեդիա տեքստերին առնչվող հարցերին՝ ապակողմնորոշող մեդիա բովանդակության ճանաչմանը, ինչպես նաև մեդիայի արտադրությանը և տեղեկատվության փոխանակման հարցերին:

Այս նյութը նաև հատուկ ուշադրություն է դարձնում գիտությանը և հետազոտություններին: Գիտությունը ոիտարկվում է որպես հասարակության կենսական բաղադրիչ, ինչպես նաև օպերացիոն մեթոդ և ինարավորություն, որից կարող են օգտվել նաև համալսարաններից դուրս գտնվող անձինք:

Գիտության մեջ կա ստեղծարարության, ինքնարտահայտման, տարբեր կերպ գործելու ինարավորություն և մասնակցելու և ազդեցություն ունենալու ձգտում: Տվյալ նյութի վարժությունների բաժիններում աշակերտները կարող են քննարկումներ ունենալ առօրյա կյանքում գիտության և հետազոտությունների նշանակության մասին, ինչպես նաև ներկայացնել հետազոտողների աշխատանքը, դիտարկել հետազոտությանը մասնակից դառնալու քաղաքացիների ինարավորությունները, փնտրել և փոխանակվել հետազոտական տվյալներով, ինչպես նաև փորձարկել բոլն հետազոտական աշխատանքների իրականացումը:

## Կարող եք սկսել այստեղից

"Վստահելի տեղեկությունների փնտրությունը" ձեռնարկը նպաստում է ինֆորմացիայի փոխանցման հարցում մեղիայի նշանակության խնդրի քննարկմանը, ինչպես նաև տեղեկությունների վստահելիության ստուգման գործնական իրականացմանը: Նյութը բաղկացած է մեղիային և գիտությանը վերաբերող երկու բաժիններից, որոնք իրենց հերթին բաժանվում են վարժությունների ենթաբաժինների:

Առաջադրանքների բարդության աստիճանը նկարագրված է աստղերով: Բարդության աստիճանը զուտ իրազեկման նպատակով է պատկերված: Յետևաբար թույլ մի տվեք, որ այն ձեզ սահմանափակումների մեջ դնի: Բոլոր առաջադրանքները կարող են և պետք է փոխվեն՝ ձեր աշխատանքին համապատասխանելու համար:

Այս առաջադրանքները հեշտ են և համապատասխանում են փոքր երեխաների և սկսնակների խմբերին:



Այս առաջադրանքները փոքր-ինչ ավելի արստրակտ մտածողություն, ժամանակ և մեղիագրագիտության հմտություններ են պահանջում:



Այս առաջադրանքները պահանջում են մեղիան և սեփական գործողությունները վերլուծելու կարողություն և հիմնականում նախատեսված է երիտասարդների և մեծահասակների մեղիակրթության համար:



Առաջադրանքը կարող է կիրառվել կարողությունների տարբեր մակարդակներ ունեցող խմբերի հետ՝ պայմանով, որ դրա նպատակները և մեթոդները համապատասխանեն խմբին:



# **Զովանդակություն**

I Մեղիան որպես ինֆորմացիայի տարածող.....	5
1.Ծանոթությունը մեղիայի հետ.....	7
2.Մեղիա մշակույթը լի է ինֆորմացիայով.....	9
3.Ի՞նչ է մեզ սովորեցնում մեղիան.....	11
4.Կարո՞ղ եմ վստահել այս տեքստին.....	11
5.Վերևագրերը և լուսանկարները տարածում են ինֆորմացիա.....	14
6.Եկեք ստեղծենք մեր սեփական հոդվածը.....	15
II Գիտությունը գեներացնում է վստահելի ինֆորմացիա.....	16
1.Ինչպես գիտությունը դարձնել տեսանելի.....	17
2.Հարցորւ հետազոտողին.....	20
3.Թնարկում գիտության և հետազոտությունների մասին.....	22
4.Գիտություն ստեղծող քաղաքացիներ.....	26
5.Եկեք ուսումնասիրենք.....	29
6.Հետազոտության վրա հիմնված մոտեցում աշխատանքային կյանքում.....	31

## I Մեղիան որպես ինֆորմացիայի տարածող

Մեղիա դաշտը Ենթարկվում է փոփոխությունների և դառնում առավել բազմազան, ինչը մեղիագրագիտության տեսանկյունից տեղեկությունները գնահատելու հմտությունը դարձնում է չափազանց կարևոր:

Սույն ձեռնարկում "մեղիա դաշտ" արտահայտությունը նշանակում է տարբեր տեսակի մեղիաների ամբողջություն: Մեղիայի օգնությամբ մենք կարողանում ենք հետևել ողջ աշխարհում կատարվող իրադարձությունների ընթացքին, երբեմն նույնիսկ իրական ժամանակում: Յեռուստացույցով և թերթերի միջոցով հաղորդվող լուրերից բացի կարող ենք տարբեր իրադարձությունների հետևել, օրինակ, մեր խելացի հեռախոսների, տարլետների և համակարգիչների վրա: Տարբեր մեղիա ընկերություններ իրատարակում են ամսագրեր և ստեղծում կայքեզեր՝ համացանցում



տեղեկություններ տարածելու նպատակով: Սոցիալական մեդիան շատ մեծ դեր ունի ինֆորմացիայի տարածման հարցում: Ինֆորմացիայի վստահելիության գնահատումը կենսական նշանակություն ունի, քանի որ աշխարհի վերաբերյալ, ինչպես նաև աշխարհում կատարվող իրադարձությունների վերաբերյալ մեր կարծիքը շատ առումներով հիմնված է մեդիայի միջոցով փոխանցվող ինֆորմացիայի վրա: Քանի որ տարբեր մեդիաներ աշխատում են տարբեր կերպ և հետևում են տարբեր կանոնների, կախված օգտագործվող մեդիայի տեսակից, առաջանում է նաև ինֆորմացիայի վստահելիությունը գնահատելու համար տարբեր հմտությունների անհրաժեշտություն: Օրինակ, օրաթերթում հրապարակված տեղեկությունների վստահելիության գնահատումը կարող է տարբերվել սոցիալական մեդիայում հրապարակված տեղեկության վստահելիության գնահատումից:

## **Մեդիային վերաբերող բաժնի նպատակներն են.**

- Խթանել մեդիայի՝ որպես վստահելի ինֆորմացիա տարածողի նշանակության ընկալումը,
- Ապահովել իրազեկվածություն առ այն, թե ինչ ճանապարհներով մեդիան կարող է բարձրացնել իր վստահելիության մակարդակը,
- Ապահովել լիարժեք իրազեկվածություն կեղծ լուրերի վերաբերյալ, ինչպես նաև ապահովել ապակողմնորոշող մեդիա բովանդակության այլ ձևերի ճանաչման կարողություն,
- Զարգացնել սոցիալական հմտություններ ու թիմային աշխատանք,
- Զարգացնել մեդիա արտադրության առևտուն հմտություններ,
- Խթանել ինֆորմացիայի մատչելիության ապահովումը:

## **Մեդիան տարածում և ինֆորմացիա**

Ըստ Ֆինլանդիայում իրականացված մի ուսումնասիրության, որը դիտարկել է 10-ից 29 տարեկան անձանց սովորությունները, ուրիշների հետ կապ պաշտպանելուց բացի մեդիայից օգտվելու երկրորդ ամենակարևոր պատճառը տեղեկություններ փնտրելու անհրաժեշտությունն է: Երրորդ ամենատարածված պատճառը ինչ-որ նոր բան սովորելու ցանկությունն է:

Գնալով ավելի ու ավելի մեծ թվով մարդիկ են ստանում տեղեկություններ ստեղծելու և տարածելու հնարավորություն: Յրապարակումների տարբեր թվային հարթակները հնարավորություն են տալիս կատարելու տարբեր բլոգային և տեսաբլոգային գրառումներ: Սա իր հերթին հնարավորություն է ընձեռում, որպեսզի մարդիկ իրապարակեն սեփական մեդիա բովանդակությունը, պատմեն իրենց համար կարևոր հարցերի մասին և փոխանակվեն տեղեկություններով: Շատերի համար տեսաբլոգերն ու բլոգերը հանդիսանում են նորությունների հիմնական աղբյուր: Մեդիայով լեցուն իրենց ամենօրյա կյանքում մարդիկ ունեն իրենց գտած ինֆորմացիայի վստահելիության աստիճանը գնահատելու հետզհետեւ աճող պատասխանատվություն:

## Ինֆորմացիայի Մատչելիությունը

Մեղիագրագիտության հմտությունների զարգացման միջոցով կարող է խթանել նաև ինֆորմացիայի մատչելիությունը: Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 19-րդ ենթագլիքի համաձայն՝ մենք բոլորս ունենք կարծիք արտահայտելու և ազատ խոսքի իրավունք, ինչը ներառում է բոլոր տեսակի մեղիաներով տեղեկություններ ձեռք բերելու, ստանալու և դրանք տարածելու իրավունքը: Ինֆորմացիայի մատչելիության խթանումն ուղղակիրեն կապված է ներառական հասարակության, ժողովրդավարության, մարդու իրավունքների իրացման և հարատև ապագայի կառուցման հետ:

### 1. Ծանոթությունը մեղիայի հետ



Մեղիա հետազոտություններ իրականացնելիս ճիշտ է ուսումնասիրելը, թե ինչպիսի տարբեր մեղիա գործիքներ և բովանդակություններ կան: Մեղիայի հետ ծանոթացնումը կարող է արվել "Մեղիան և դրա գործածումը" ներկելու առաջադրանքի օգնությամբ քննարկում իրականացնելու միջոցով:

#### Մեղիայի մասին քննարկում

Մասնակիցներին խնդրեք կազմել փոքր խմբեր և ազատորեն քննարկել, թե ինչ է նշանակում մեղիան և ինչ մեղիա միջոցների են նրանք ծանոթ: Խնդրեք նրանց կազմել տարբեր մեղիաների ցանկ: Միասին անցեք քննարկման արդյունքներով: Հավաքեք մեղիա ցանկը և դիտարկեք այն միասին՝ քննարկելով, թե որոնք են ձեր խմբի ներսում ամենաշատը օգտագործվող մեղիաները:

#### Ներկելով մեղիան

Ներկելու առաջադրանքի ժամանակ մասնակիցները ներկում են տարբեր մեղիա գործիքների վրա, միաժամանակ ծանոթանալով մեղիա բարի հետ՝ իրենց սեփական օրինակներով դիտարկելով, թե ինչպիսի բովանդակություն են ապահովում տարբեր մեղիաները:

Մասնակիցների համար նախապես տպեք սույն ձեռնարկի վերջին էջերի մեղիա պատկերները:

Պատկերները ներկելիս կարող եք խոսել տարբեր մեղիաների և նրանց գործածության մասին: Դատարկ ուղղանկյան մեջ կարող եք, օրինակ, նկարել երեխաների ամենասիրած մեղիան: Կարող եք նոր տարբեր մեղիաներ գտնել ձեր շրջապատից: Ի՞նչ գործիքներ կարող եք գտնել:



## Ի՞նչ է նշանակում «Մեղիս» բառը

Այս ձեռնարկում մեղիս բառը վերաբերում է թե՛ մեղիս գործիքներին, ինչպիսիք են, օրինակ, հեռուստացույցը, գիրքը, ամսագիրը, համակարգիչը և խելացի հեռախոսը, թե՛ տարբեր մեղիս բովանդակություններին, ինչպիսիք են, օրինակ, հեռուստատեսային ծրագրերը, ֆիլմերը, լուսանկարները, թերթերի հոդվածները, գրքերը, համացանցային հավելվածները կամ խաղերը: Լայն տեքստային ընկալման վրա հիմնվելով՝ ինֆորմացիան կարող է ներկայացվել և տարածվել շատ տարբեր եղանակներով՝ վիզուալ, առլեռնվիզուալ կամ, օրինակ, թվային եղանակով: Առանձին մեղիս բովանդակությունը՝ լուսանկարը, առլեռն ֆայլը կամ տեսանյութը կոչվում է "մեղիս տեքստ", սակայն մեղիս գործիքները և բովանդակությունը միշտ չեն, որ կարելի հստակ կերպով տարբերել միմյանցից, և հաճախ դա անելու անհրաժեշտություն էլ չկա: Մեղիս բովանդակությունները մարդկանց ամենօրյա կյանքի մշտական մասն են, որոնց միջոցով հսկայական ծավալների ինֆորմացիա է տարածվում: Զննադատական մտածողությունը և տեղեկություններ փնտրելու հմտությունները օգնում են գտնել մեղիսյում առկա եական, վստահելի ինֆորմացիան:

## 2. Մեղիս մշակույթը և է ինֆորմացիայով



Ժառանգություն ստացած գիտելիքը մի եզրույթ է, որը վերաբերում է սերնդեսերունդ բանավոր ճանապարհով փոխանցվող ինֆորմացիային, օրինակ, տարբեր պատմությունների և ավանդույթների փոխանցմանը: Ինֆորմացիան կարող է տարածվել և փոխանցվել շատ տարբեր տեսակի մեղիաների միջոցով: Աշխարհում կա հսկայական ծավալների ինֆորմացիա, որը հնարավոր է փնտրել տարբեր եղանակներով: Այս առաջադրանքի նպատակն է ցուցադրել տարբեր ինֆորմացիոն աղբյուրների բազմազանությունը և տեղեկություններ փնտրելու հնարավորությունները, ինչպես նաև զարգացնել տեղեկությունների նպատակային փնտրությի վերաբերյալ ընկալումը:

### 1. Ինֆորմացիոն աղբյուրների բազմազանությունը

Մեր զգացմունքներից, փորձառություններից և այլ անձանց բացատրություններից զատ մենք կարող ենք տարբեր մեղիաներ կիրառել՝ սովորելու և փոխանակելու ինֆորմացիա տարբեր իրավիճակների վերաբերյալ: Զննարկեք և թվարկեք ձեր իմացած բոլոր ինֆորմացիոն աղբյուրները: Սրանք կարող են լինել կոնկրետ վայրեր և հաստատություններ, օրինակ, գրադարաններ կամ թանգարաններ, կամ կարող են լինել մեղիա գործիքներ, հավելվածներ կամ մեղիա բովանդակություն, ինչպիսիք են սոցիալական մեղիայի ալիքները (յութուբ, տիկտոկ, թվիթեր, ինստագրամ, ֆեյսբուք, ընթերց, յոդել, սևափչաթ):

Դիմումներ քննարկումների վրա՝ համեմատեք տարբեր ինֆորմացիոն աղբյուրները և նրանց հնարավորությունները՝ տեղեկություններ փնտրելու ընթացքում: Կարող եք ինֆորմացիայի որոնման արդյունքները պատկերել քարտեզի տեսքով: Տարբեր աղբյուրների դեպքում հնարավոր է տեղեկություններ փնտրել տարբեր ձևերով և տարբեր թեմաների շուրջ:

Յուրաքանչյուր ինֆորմացիոն աղբյուրից ամբողջական տեղեկություններ միշտ չեն, որ հնարավոր է ստանալ: Կարևոր է ուշադրություն դարձնել ինֆորմացիոն աղբյուրների բազմազանության և նրանցից պատշաճ օգտվելու վրա: Նախապես պլանավորելը կարող է դյուրին դարձնել տեղեկությունների փնտրությը:

### 2. Տարբեր ինֆորմացիոն աղբյուրներ

Խոսեք ինֆորմացիոն աղբյուրների միջև առկա տարբերությունների մասին: Ի՞նչ տարբեր տեսակի տեղեկություններ կարելի է տարածել տարբեր մեղիա միջոցներով: Ո՞վ է պատրաստում այդ ինֆորմացիան (պրոֆեսիոնալ լրագրողներ, հետազոտողներ, փորձագետներ, ծառայության ցանկացած օգտատեր): Ի՞նչ ձևաչափով է ներկայացվում ինֆորմացիան (պատկերներ, տեքստ, խոսք, տեսանյութ, ձայնագրություն): Ո՞ր ինֆորմացիոն աղբյուրներն եք համարում ամենավստահելին և ինչո՞ւ:

### 3. Ինֆորմացիայի փնտրություն

Ընտրեք թեմա, որի շուրջ տեղեկություններ եք փնտրում: Կարող եք լրացնեցիք տեղեկություններ փնտրել արդեն ծանոթ թեմայի շուրջ կամ ուսումնասիրել բոլորովին նոր մի բան: Սասանակիցներին բաժանեք փոքր խմբերի և խնդրեք նրանց փնտրել և գտնել ինֆորմացիա միևնույն թեմայի վերաբերյալ՝ օգտվելով միայն մեկ ինֆորմացիոն աղբյուրից: Այս վարժության նպատակն է ցուցադրել ինֆորմացիոն աղբյուրների բազմազանությունը և նրանց միջև առկա տարբերությունները:

Կախված հասանելի տարբերակներից՝ ինֆորմացիոն աղբյուրները կարող են, օրինակ, լինել հետևյալը՝

- Դասագրեքեր և գեղարվեստական գրականություն,
- Թերթեր և ամսագրեր,
- Հեռուստատեսություն,
- Ռադիո,
- Համացանց,
- Ինչ վերաբերում է առցանց աղբյուրներին, կարող եք խմբերին հանձնարարել աշխատել տարբեր որոնման համակարգերով՝ Google, Yahoo, Ask, DuckDuckGo, IxQuick, Yandex, Wolfram Alpha,
- Սոցիալական մեդիայի ծառայություններ,
- Հարցագրույցներ, հարցնել այլ մարդկանց,
- Տարբեր կազմակերպությունների, օրինակ, ՄԱԿ-ի կամ ՏՀՀԿ-ի կողմից պատրաստվող և հավաքվող վիճակագրական նյութեր:

### 4. Ինֆորմացիոն աղբյուրների վերջնական քննարկում և գնահատում

Ինֆորմացիայի որոնման արդյունքներն այնպես ներկայացրեք, որպեսզի երկու խմբերը կարողանան միմյանց պատմել իրենց գտած տեղեկությունների մասին և համեմատել արդյունքները:

- Նրանք կարողացե՞լ են տեղեկություններ գտնել թեմայի վերաբերյալ:
- Արդյո՞ք տեղեկությունները համակողմանիորեն հասանելի են եղել:
- Ի՞նչ ձևաչափով են ինֆորմացիան:
- Ինֆորմացիան գտնելը հե՞շտ էր:
- Ի՞նչ առավելություններ կամ մարտահրավերներ են եղել տվյալ ինֆորմացիոն աղբյուրից օգտվելիս:
- Իրենց կարծիքով՝ ինֆորմացիան վստահելի՞ էր:

Քիմսվելով քննարկումների վրա՝ համեմատեք տարբեր ինֆորմացիոն աղբյուրները և նրանց հնարավորությունները տեղեկություններ փնտրելու ընթացքում: Կարող եք ինֆորմացիայի որոնման արդյունքները պատկերել քարտեզի տեսքով: Տարբեր աղբյուրների դեպքում հնարավոր է տեղեկություններ փնտրել տարբեր ձևերով և տարբեր թեմաների շուրջ:

**Խորհուրդ.**  
Ձեր շրջապատում  
առկա ինֆորմացիոն  
աղբյուրների մասին  
կարող եք նաև սովորել՝  
այցելելով գրադարան  
կամ թանգարան,  
կամ տեղական  
որևէ լրատվամիջոց՝  
օրինակ, այց թերթի  
խմբագրություն:

Յուրաքանչյուր ինֆորմացիոն աղբյուրից ամբողջական տեղեկություններ միշտ չեն, որ ինարավոր է ստանալ: Կարևոր է ուշադրություն դարձնել ինֆորմացիոն աղբյուրների բազմազանության և նրանցից պատշաճ օգտվելու վրա: Նախապես պլանավորելը կարող է դյուրին դարձնել տեղեկությունների փնտրտութը:

### 3. Ի՞նչ է մեզ սովորեցնում մեղիան



Սահմանեք որոշակի ժամանակահատված, որի ընթացքում թղթի վրա կգրեք այն ամենը, ինչ սովորել եք տարբեր մեղիաների օգնությամբ: Օրինակ, մեկ շաբաթվա ընթացքում միասին գրի առեք այն նորությունները, որոնք սովորել եք մեղիայի միջոցով:

Ինչպիսի՞ ինֆորմացիա եք տեսել, լսել կամ կարդացել: Ո՞ր մեղիայի միջոցով եք սովորել այդ նոր բանը: Արդյո՞ք մեղիայի օգնությամբ սովորել եք ինչ-որ նոր բան անել: Առաջադրանքի նպատակն է ցուցադրել մեղիայի նշանակությունը ուսումնառության տեսանկյունից:

Առաջադրանքն իրականացնելիս կարող եք տպած մեղիա պատկերի դատարկ հատվածի վրա գրի առևել կամ նկարել մեղիայի միջոցով սովորած նորությունները: Եթե առաջադրանքը հանձնարարվում է որպես տնային աշխատանք կամ կատարվում է տանը, ապա կարևոր է նաև աշակերտի ընտանիքի համար ընդգծել մեղիայի և ուսումնառության միջև կապը:

Վերջում թվարկեք, թե ինչ եք լսել և քննարկեք, թե այլ ինչ կցանկանայիք սովորել կամ ինչի մասին կուզեիք ավելին իմանալ: Այս գրույցը կարող է հետազայում կիրառվել որպես հիմք՝ հոդված կամ հետազոտություն իրականացնելու համար: Միգուցե խմբի անդամները կարող են նաև միմյանց սովորեցնել այն ամենը, ինչը նրանք սովորել են մեղիայի միջոցով:

### 4. Կարո՞ղ եմ վստահել այս տեքստին



Կարժության այս գաղափարի նպատակն է խրախուսել մեղիան մեկնաբանելու և վերլուծելու հմտությունները, մասնավորապես վստահելիության տեսանկյունից:

#### 1. Ի՞նչ է վերլուծվում

Վերլուծության ենթարկվող տեքստերը կարող են, օրինակ, լինել թերթից որևէ նորության հատվածներ, առցանց տեքստեր կամ նորությունների տեսանյութեր: Մասնակիցներին բաժանեք փոքր խմբերի և ինարավորություն տվեք ընտրել մեկ մեղիա տեքստ՝ վերլուծելու նպատակով: Յնարավորինս տարբեր մեղիա տեքստեր ընտրելու համար ցանկալի է, որ դրանք ընտրվեն տարբեր աղբյուրներից: Օրինակ, առաջադրանք 2-ի ընթացքում հավաքվող ինֆորմացիոն աղբյուրները կարող են օգտագործվել որպես հիմք:



## 2. Վերլուծությունը

Մասնակիցներին խնդրեք վերլուծել որևէ սոցիալական մեղիա տեքստ՝ հիմնվելով հետևյալ հարցերի վրա: Յարցերը կարող եք խմբագրել և փոփոխել՝ ըստ մասնակիցների և վերլուծված մեղիա տեքստերի: Պատասխանները ի մի բերեք մեկ տեղում՝ քարտեզի, ցանկի կամ եսեի տեսքով: Առաջադրանքի հարցերը կազմվել են Գրադարանային ասոցիացիաների և հաստատությունների միջազգային ֆեդերացիայի (IFLA) կողմից պատրաստված "Ինչպես նկատել կեղծ լուրերը" ձեռնարկի հիման վրա և թարգմանվել են Ֆիլնական գրադարանների ասոցիացիայի կողմից:

### Ստուգեր նախապատմությունը

- Որտե՞ղ է այդ պատմությունը հրապարակվել: Յրատարակողը վստահելի՞ է թվում: Ո՞վ է հեղինակը:
- Հոդվածի վերջում հեղինակի մասին տվյալներ կա՞ն:
- Հեղինակը վստահելի՞ է թվում: Ստուգեք ամսաթիվը:
- Ե՞րբ է այդ նորությունը հրապարակվել: Այն շարունակու՞մ է ակտուալ մնալ:

### Ծագրտեք ձեր վերաբերմունքը

- Մտածեք, թե արդյոք ձեր սեփական նախապաշարմունքները կարող են չափազանցնել հոդվածի մասին ձեր գնահատականը: Կարդացեք ամբողջ հոդվածը:
- Ո՞րևէ դրա թեման: Վերևագիրը հոդվածի բովանդակությանը համապատասխանու՞մ է: Ու՞մ տեսակետն էներկայացվում և ումը՝ ոչ:

## Ինչի՞ւ վրա է հիմնվում հոդվածը

- Աղբյուրներ կա՞ն սշված: Ի՞նչ աղբյուրի վրա է հիմնվում հոդվածը: Հոդվածում կոնկրետ հղումներ կա՞ն: Զաշվի առնելով հոդվածի թեման՝ կարծում եք, որ օգտագործված աղբյուրները վստահելի՞ն:

### **3. Արդյունքների վերլուծություն**

Թևարկեք արդյունքները և վերլուծության իրականացման ձևերը: Ի՞նչ եք զգում վստահելիությունը գնահատելիս: Տարբեր աղբյուրներից գտնված մեղիա տեքստերը ինչո՞ւ են տարբերվում միմյանցից:

### **Ի՞նչն է մեղիային դարձնում վստահելի**

Ֆիննական պրոֆեսիոնալ մեղիա օպերատորների մեջ մասը որդեգրել են լրագրողների համար սահմանված ընդհանուր ուղենիշներ: Այս ուղենիշները Զանգվածային լրատվամիջոցների խորհրդի կողմից սահմանված ցուցումների շարք են, որոնց նպատակն է զանգվածային լրատվամիջոցների շրջանում խթանել խոսքի ազատության պատասխանատու կիրառումը և մասնագիտական եթիկայի վերաբերյալ քննարկմանը նպաստելը:

Շատ ցուցումներ կենտրոնանում են նրա վրա, թե ինչպես ապահովել վստահելի տեղեկություններ և անդրադառնում են այնպիսի թեմաների, ինչպիսիք են լրագրողների մասնագիտական կարգավիճակը, տեղեկությունների ձեռք բերումը և սխալների ուղղումը: Լրագրողը գլխավորապես պատասխանատու է իր ընթերցնողների, լսողների և դիտողների առջև, որոնք իրավունք ունեն իմանալու, թե ինչ է տեղի ունենում հասարակության մեջ:

Լրագրողը պարտավոր է իր նյութը առավելագույնս հիմնավորել փաստերով, նույնիսկ եթե դրանք նախկինում արդեն հրապարակվել են: Ըստ վերոնշյալ ուղենիշների՝ լրատվամիջոցը պետք է իր լսարանին տեղեկացնի այն գործելակերպի և սկզբունքների մասին, որոնց հիման վրա նրանք կուղղեն իրենց սխալները: Լրագրողների համար սահմանված ուղենիշներն ամբողջությամբ հասանելի են այստեղ՝ [http://www.jsn.fi/en/guidelines\\_for\\_journalists/](http://www.jsn.fi/en/guidelines_for_journalists/)

Մեղիա բովանդակությունը պատրաստող ոչ բոլոր անձինք են պրոֆեսիոնալ լրագրողներ կամ պարզապես անձինք են, որոնք տարբեր պատճառներով չեն որդեգրել լրագրողների համար սահմանված ուղենիշները: Օրինակ, բլոգերները, տեսաբլոգ և այլ սոցիալական մեղիա օպերատորները պատրաստում, հրապարակում և տարածում են անսահման քանակությամբ ինֆորմացիա:

Բլոգեր և մեղիա բովանդակությունը պատրաստում են շատ տարբեր մարդիկ և օպերատորներ: Այդ իսկ պատճառով ընդհանուր ուղենիշներ սահմանելը կարող է բարդ լինել: Օրինակ, չկան եթիկայի ընդհանուր ուղենիշներ սոցիալական մեղիայի բովանդակությունը արտադրողների համար, թեպետ որոշ համայնքներ ստեղծել են իրենց սեփական եթիկայի ուղենիշները:

## Խորհուրդ.

Արդյունքները միշտ միասին քննարկեք: Տարբեր աղբյուրներից ստացված տեղեկությունների վստահելիությունը ստուգելիս միշտ հնարավոր է, որ աշակերտները սխալվեն և ապատեղեկատվությունն ընդունեն որպես փաստ: Օրինակ, կեղծ լուրեր տարածող որոշ կայքեր կարող են ունենալ բավականին պրոֆեսիոնալ և վստահելի տեսք: Ծառ կարևոր է, որպեսզի վերլուծության արդյունքները դիտարկվեն համատեղ: Եթե աշակերտները սխալվել են, բացատրեք, թե կոնկրետ որտեղ է սխալը:

Կարևոր է հավաստիանալ, որ այս վարժությունից հետո աշակերտները ապատեղեկատվությունն այլևս հիմք չեն ընդունի:

## 5. Վերևագրերը եւ լուսանկարները տարածում են ինֆորմացիա



Տարբեր մեղիա գործիքների՝ օրինակ, սոցիալական մեդիայի, թերթերի և ելեկտրոնային ասմագրերի միջոցով մենք հնարավորություն ունենք գտնելու տեղեկություններ ամենատարբեր թեմաների վերաբերյալ: Ծառ նյութեր գրվում և հրապարակվում են կարճ ժամկետներում:

Վերևագրի նպատակն է հանրության հետաքրքրությունը շարժել և ամփոփ ներկայացնել նյութի հիմնական բովանդակությունը: Յիմնական տեքստից կամ ելույթից զատ նյութի բովանդակության վերաբերյալ ընթերցողի կամ դիտողի ընկալման վրա ազդում են նաև նկարներն ու վերևագրերը: Ըստ Ֆիննական լրագրողների համար սահմանված ուղենիշների՝ նկարները կամ ձայները չպետք է օգտագործվեն ապակողմնորոշիչ կերպով: Առաջադրանքը սովորեցնում է, թե ինչպես վերևագրել նյութերը և ցուցադրել վերևագրերը:

### Վերևագրման առաջադրանք

1. Ըստրեք լուսանկար, որի համար աշակերտները, փոքր խմբերում աշխատելով, կընտրեն վերևագիր: Այս նյութի վերջում ներկայացված հավելված 2-ը (սկսած՝ էջ 31-ից) ներկայացնում է օրինակներ Լուսանկարչության ֆիլմնական թանգարանից: Կարող եք նաև լուսանկարներ փնտրել Finna.fi ծառայությունից կամ Եվրոպական Europeana կայքից: Տարբեր խմբերի կողմից միևնույն լուսանկարին տրված վերևագիրը ցույց է տալիս, թե ինչպես է հնարավոր նույն թեմայի վերաբերյալ պատրաստել մի քանի նյութ:

2. Ի՞նչ է կատարվում լուսանկարի մեջ: Ի՞նչ իրավիճակում է արվել այն: Ի՞նչ կցանկանայիք պատմել ընթերցողին թեմայի վերաբերյալ: Ինչպես կարող եք շարժել լսարանի հետաքրքրասիրությունը, որպեսզի նրանք կարդան ամբողջ նյութը: Փոքր խմբերով երկու տարբեր վերևագիր որոշեք նույն լուսանկարի համար: Վերևագրերից մեկը պետք է լինի իրականությանը հնարավորինս մոտ, իսկ մյուսը՝ ապակողմնորոշող:

3. Վերջում միասին անցեք վերևագրերի վրայով և ըստրեք ամենահետաքրքիր վերևագիրը:

## 6. Եկեք ստեղծենք մեր սեփական հողվածը



Այս վարժության ընթացքում մասնակիցները պատրաստում են իրենց սեփական մեղիա տեքստերը: Առաջադրանքի նպատակն է զարգացնել ինքնարտահայտման և մեղիա արտադրության հմտությունները և դիտարկել մեղիա տեքստերի վստահելիության աստիճանը:

### 1. Թեմայի ընտրություն

Մասնակիցներին բաժանեք փոքր խմբերի, որպեսզի յուրաքանչյուր խումբը կարողանա պատրաստել մեկ նյութ: Ընտրեք նյութերի թեմաները: Դետաքրքրություն ներկայացնող թեմաները կարող եք սկզբում քննարկել միասին կամ կարող եք միասին դիտարկել թերթերում տպագրված տարբեր նյութեր:

### 2. Ինչպիսի՞ն յութ եք ցանկանում պատրաստել

Դաշնորդիվ խոսեք այն մասին, թե ինչպիսի մեղիա տեքստ եք պատրաստելու ընտրված թեմայի վերաբերյալ և որն է դրա թիրախային լսարանը: Այս մեղիա տեքստերը կարող են լինել, օրինակ, լրատվական հոդվածներ, բլոգերի գրառումներ, հարցազրույցներ, պրեզենտացիաներ, թերթի հոդվածներ կամ տեսանյութեր և վիդեո բլոգեր կոնկրետ թեմաների վերաբերյալ: Դրանք ներառելու ենք տեքստ, լուսանկարներ, տեսանյութ, ձայն, թե՛ բոլոր միասին: Ու՞մ համար են պատրաստվում այդ նյութերը: Ինչպե՞ս հրապարակել դրանք:

### 3. Բովանդակության նախագծում

Խնդրեք խմբերին իրենց ցանկությամբ որևէ թեմայի շուրջ լրացուցիչ տեղեկություններ փնտրել և պատրաստել նյութ դրանց հիման վրա: Նյութը պատրաստելիս մասնակիցները կարող են, օրինակ, պատասխանել հետևյալ հարցերին՝

- Որտեղի՞ց կարող ենք այս թեմայի շուրջ լրացուցիչ տեղեկություններ ստանալ:
- Ու՞մից կարող ենք հարցազրույց վերցնել՝ այս թեմայի հետ կապված:
- Ի՞նչ տեսանկյունից պետք է գրենք նյութը:
- Այս թեմայի ո՞ր կողմերն են հետաքրքրում թիրախային լսարանին:
- Ի՞նչ հարցերի է անդրադառնում նյութը: Ի՞նչն է բաց թողնված:
- Ի՞նչ ձևաչափով պետք է պատրաստենք նյութը:

### 4. Նյութի պատրաստում

Դաշնորդիվ պատրաստեք նյութ ձեր ցանկությամբ ընտրված թեմայի վերաբերյալ: Նյութը գրելիս մտածեք մասնավորապես, թե ինչպես կարող եք այն ձեր լսարանի համար դարձնել առավել վստահելի թվացող: Կարող եք անել հետևյալը՝

- Նշել, թե ով է պատրաստել նյութը:
- Հստակեցնել նյութի նախապատմությունը և նպատակը:
- Ներկայացնել թեմային առնչվող տարբեր տեսակետներ:
- Օգտագործել լուսանկարներ և տեսանյութեր:
- Բացատրել, թե ինչ ինֆորմացիոն աղբյուրներ են օգտագործվել:

## 5. Տարածեք ձեր նյութերը

Մտածեք այս մասին, թե ինչպես կարող են ձեր նյութերը հրապարակվել: Կարող եք կազմակերպել թվային նյութերի պրեմիերա և տպագիր նյութերի ցուցահանդես, կամ թերթ կամ ամսագիր պատրաստել դրանցով: Կարող եք նաև նյութերը հրապարակել որպես բլոգային գրառումներ, ինչպես նաև կարող եք դրանք հրապարակել թվային ուսումնական միջավայրերում: Եթե նյութերն օգտագործում են անձնական տվյալներ, ապա պետք է ուշադրություն դարձնել գաղտնիության, պահանջվող թույլտվությունների և լիցենզիաների ձեռքբերման պահանջներին:

Նկատի ունեցեք, որ հրապարակման համար հնարավոր է պահանջվեն որոշակի լիցենզիաներ, օրինակ՝ լուսանկարչական լիցենզիաներ: Գաղտնիության պահանջներն ապահովելու և պատակով կարող եք նաև նյութերը պատրաստել կեղծանուններով, գրել մարդկանց չվերաբերող այլ թեմաների մասին կամ օգտագործել լուսանկարներ, որտեղ մարդիկ պատկերված չեն: Պարտադիր չե, որ նյութերը հրապարակվեն ձեր խմբից դուրս և, ցանկության դեպքում, կարող եք դրանք պարզապես պահել ինքներդ ձեր համար:

## II Գիտությունը գեներացնում է վստահելի ինֆորմացիա

Գիտությունը և հետազոտությունները շատ մեծ դեր են խաղում հասարակության և մարդկանց ամենօրյա կյանքում: Գիտության կարևորության մասին վկայող օրինակներ կարելի են տեսնել կյանքի ողջ ընթացքում:

Մեր կողմից օգտագործվող տեխնոլոգիաները, ինչպես նաև հաղորդակցության և ինֆորմացիայի ալիքները հիմնականում հիմնվում են գիտության միջոցով արված դիտարկումների և հայտնագործությունների վրա: Բժշկական հետազոտությունները խթանում են առողջությունը և ապահովում օգտագործվող դեղամիջոցների անվտանգ լինելը: Շրջակա միջավայրի և կլիմայի ուսումնասիրությունն օգնել է նկատել և ուշադրություն դարձնել այնպիսի երևույթների, որոնք ազդեցություն են ունենում ամբողջ աշխարհի վրա, ինչպես օրինակ կլիմայի փոփոխությունը և դրա պատճառները: Գիտությունը կարող է նաև գտնել կայուն ապագա՝ ապահովելու համար անհրաժեշտ գործիքները:

Հետազոտական տեղեկությունների հիման վրա մենք կարող ենք լավ հիմնավորված որոշումներ կայացնել մեր կյանքի, ամենօրյա գործողությունների և համայնքների վերաբերյալ: Հետազոտությունը ինֆորմացիայի ստեղծագործ և համակարգային արտադրությունն է: Ինֆորմացիա գեներացվում է նաև առանձին ուսումնասիրությունների միջոցով: Հետազոտություններն օգնում են հաստատել փաստերը, նախապես հայտնի գիտելիքը, լուծել խնդիրներ և ամրացնել արդեն գոյություն ունեցող տեսությունները կամ մշակել նորերը:

Սեղիան գիտության և հետազոտությունների կարևոր մաս է կազմում: Հետազոտությունները, օրինակ, իրականացվում են լուսանկարչության, ծայնագրության, նշում-

Ներ անելու միջոցով, ինչպես նաև հետազոտական մեղիա աշխատանքների՝ լուսանկարների, գրառումների, լրագրության կամ տեսանյութերի օժանդակությամբ:

Հետազոտության արդյունքները մեղիայի օգնությամբ կարող են տարածվել ավելի արդյունավետ կերպով: Ողջ աշխարհում իրականացվող հետազոտությունները հնարավոր են կարդալ տպագիր ամսագրերում կամ առցանց հրատարակություններում: Հետազոտությունների արդյունքները և այլ տվյալները հրապարակվում են որպես պատկերներ և տեսանյութեր, ինչպես նաև դրանք հրապարակվում են սոցիալական մեղիայի օգնությամբ: Մեղիան մարդկանց ուժերը մեկտեղում են տարբեր ճանապարհներով և հնարավորություն է ստեղծում ուսենալ քննարկումներ գիտության մասին: Մեղիան նպաստում է գիտության առնչվող համագործակցությանը:

Սույն բաժնի նպատակն է հասկանալ հետազոտությունների նշանակությունը վստահելի ինֆորմացիայի գեներացման հարցում: Զեռնարկի առաջադրանքների արդյունքում աշակերտները գիտության և հետազոտությունների մասին սովորում են շատ տարբեր մեթոդներով, փորձարկում են հաղորդակցության հմտություններ և քննարկում հետազոտություններին առնչվող հարցեր, դիտարկում հետազոտվող տեղեկությունների մատչելիությունը, ինչպես նաև իրականացնում գործնական հետազոտություններ:

### Այս բաժնի նպատակն է.

- Նպաստել հասարակությունում և անհատի կյանքում գիտության և հետազոտությունների նշանակության ընկալմանը:
- Նպաստել գիտության բազմազանության մասին ընկալմանը:
- Բարձրացնել իրազեկվածության մակարդակը՝ գիտական ինֆորմացիա գեներացնելու հարցում գիտնականների դերի վերաբերյալ:
- Նպաստել գիտական ինֆորմացիայի գեներացման հարցում վստահելիության բարձրացման խնդիրների ընկալմանը:
- Խթանել հարգալից հաղորդակցության և շփման հմտությունները:
- Խթանել հետազոտությունների իրականացմանն առնչվող կարողությունների և մոտեցման կիրառումը:
- Խթանել արտահայտվելու և տարբեր ձևաչափերով տեղեկություններ տարածելու կարողությունը:

## 7. Ինչպես գիտությունը դարձնել տեսանելի



Գիտությունը մեծ դեր ունի հասարակության զարգացման համար և մարդկանց առօրյա կյանքում, սակայն արդյո՞ք մենք այս նույնիսկ նկատում ենք մեր ամենօրյա կյանքում: Այս առաջադրանքի նպատակն է դիտարկել գիտությունը մարդկանց կյանքում առօրյայում տեսանելի դարձնելու խնդիրը:

## Հետազոտություններն ամենուրեք են

Նախ, նայեք ձեր չորս կողմը և մտածեք այն ամենի մասին, որոնց վրա գիտությունն ու հետազոտություններն ազդեցություն են ունեցել: Կարող եք մտածել սեփական կյանքի մասին, ձեր կողմից օգտագործվող տեխնոլոգիաների, դպրոցի, ուսման, տեղեկություններ փնտրելու և հաղորդակցության, ձեր նախասիրությունների և վերականգնողական առողջության մասին: Սրանցից ո՞րն է ինչ-որ կերպ կապված գիտական գործողությունների հետ: Ի՞նչ հետազոտողների եք ճանաչում և ի՞նչ հետազոտություններ են նրանք արել:

### Օրինակների ներկայացում մեղիայի միջոցով

Այսուհետև ընտրեք մի թեմա, որի վրա հետազոտական աշխատանքներն ազդեցություն են ունեցել և գրեք դրան առևվող մեղիա տեքստ, որտեղ դիտարկում եք, թե ինչ-պիսին կլիներ աշխարհն առանց այդ հայտնագործության: Սա կարող է լինել, օրինակ, նկարի, պրեզենտացիայի, եստե, գրավոր կարծիքի կամ բլոգի գրառման տեսքով: Առաջադրանքը կարող է իրականացվել թե՛ խմբով, թե՛ անհատապես:

### Ներկայացրեք ձեր տեքստերը

Գիտության նշանակության մասին աշխատանքները կարող եք նաև հրապարակել, որպեսզի մյուսները նույնագեն տեսնեն դրանք պրեզենտացիաների, ցուցահանդեսների, արշավների տեսքով կամ պարզապես առցանց հարթակներում, սոցիալական մեդիայում կամ որպես բլոգ գրառում: Եթե հրապարակվում են անչափահասների կողմից պատրաստված աշխատանքներ, հիշեք, որ պետք է խնդրեք համապատասխան թույլտվություն թե՛ երեխաներից, թե՛ նրանց ինամակալներից:

### Ինչո՞ւ հետազոտությունը վստահելի

Հետազոտությունը համարվում է ինֆորմացիայի գեներացման ամենավստահելի մեթոդներից մեկը: Հետազոտված տեղեկությունների վստահելիությունը կատարելագործվում է բազմաթիվ եղանակներով՝ գրախոսություն, բոլոր կողմից ընդունված հետազոտական աշխատանքների էթիկան և թափանցիկությունը նույնագեն իրենց հերթին ապահովում են ինֆորմացիայի վստահելիությունը: Գիտությունը չի ենթադրում, որ ինֆորմացիան փոփոխական չէ, քանի որ նոր հետազոտությունների արդյունքում կարող են առաջանալ նոր տեղեկություններ, որոնց հիման վրա նախկին տեսակետները լրացվում են կամ ամբողջությամբ փոփոխության ենթարկվում:

Վստահելի հետազոտության գործոններից է դրա հրատարակությունը գրախոսությունից հետո: Հետազոտության գրախոսությունը պահանջում է մեծ կարողություններ և գիտելիք: Զանի որ հետազոտությունները սովորաբար գործունենք բարդ, սահմանափակ թեմաների հետ, որոնց ընկալման համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտական փորձառություն տվյալ ոլորտում, հետազոտության լավագույն գրախոսները սովորաբար նույն ոլորտի մյուս փորձագետներն են: Հետազոտության վստահելիությունը և դրա վերաբերյալ տարբերվող տեսակետներ ապահովելու նպատակով մի քանի փորձագետներ մասնակցում են գրախոսության գործընթացին:

Այլ հետազոտությունների կողմից իրականացվող ուսումնասիրությունը կոչվում է գրախոսություն, որև ուսի մի քանի տարբեր ձևեր. օրինակ, 1) փակ գրախոսություն, որտեղ գրախոսությունն իրականացվում է անանուն կերպով՝ հիմնվելով միայն նյութի բովանդակության վրա, 2) բաց գրախոսություն, որտեղ հետազոտողի և գրախոսողների անունները հայտնի են, կամ 3) համատեղ գրախոսություն, որտեղ գրախոսողները կարող են միասին քննարկել և գնահատել հետազոտությունը: Գրախոսության մեթոդների վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ հասանելի են հրատարակողների կայքերում՝

[Gaudeamus](#)

[Wiley: Types of peer review](#)

[Elsevier: What is peer review?](#)



Այս ցանկը հիմնված է Դեյվիդ Ռեսնիկի՝ [«Ի՞նչ է Եթիկան հետազոտության մեջ և ինչո՞ւ է դա կարևոր» հոդվածի վրա:](#)

Հետազոտությունները ազդում են աշխարհի վերաբերյալ մեր գիտելիքների և տեսակետների վրա: Ահա թե ինչու է կարևոր, որպեսզի հետազոտությունն առաջնորդվի ամուր եթիկական սկզբունքներով: Հետազոտություններ իրականացնելու եթիկան նաև վստահելիության ապահովման ամենակենտրոնական գործոններից մեկն է: Հետազոտության եթիկական մեթոդները խթանում են տարբեր կողմերի միջև համագործակցությունը, քանի որ նրանք նպաստում են աշխատանքի մեթոդների վերաբերյալ ընդհանուր ընկալման ձևավորմանը:

Հետազոտության եթիկան և տարբեր եթիկական ուղենիշները կարող են նաև մեծացնել վստահության մակարդակը հետազոտության նկատմամբ, քանի որ նրանք օգնում են աշխատանքի հիմքում ընկած եթիկական իդեալները առավել տեսանելի դարձնելու գործին:

Թափանցիկությունը հետազոտության վստահելիությունը բարձրացնելու մեկ այլ եղանակ է: Հետազոտության համար իրականացված միջոցառումները հնարավորինս թափանցիկ են դարձվում, որպեսզի ընթերցողը կարողանա հասկանալ, թե ինչ է արդեւ և ինչպես: Ինչքան մեծ է հետազոտության լսարանը, այնքան ավելի շատ մարդ է հնարավորություն ստանում գնահատելու այն և դրա արդյունքները: Հետազոտական նյութեր հրապարակվում են նաև այլ հետազոտությունների համար, որոնք կարող են դրանք դիտարկել և օգտագործել տարբեր եղանակներով: Սա նաև հեշտացնում է հետազոտության արդյունքների վստահելիությունը գնահատելու գործը:

## 8. Հարցու հետազոտողին



Այս առաջադրանքի ընթացքում աշակերտները սովորում են ֆինլանդիայում իրականացվող հետազոտության մասին և կապ են հաստատում հետազոտողի հետ: Վստահելի տեղեկությունների փնտրութիւնը կարող էք հետո հետազոտողներին՝ գիտնականներին և մասնագետներին հարցնել ինֆորմացիայի պատրաստման և վստահելի տեղեկությունների ճանաչման մասին:

Ի՞նչն է ճիշտ և ինչպե՞ս կարող ենք ճանաչել վստահելի ինֆորմացիան: Առաջադրանքի նպատակն է պարզաբանել վստահելի տեղեկություններ պատրաստելու գործընթացները, բարձրացնել իրազեկվածության մակարդակը հետազոտությունների բազմազանության վերաբերյալ, իթանել հետաքրքրասիրությունը գիտության նկատմամբ և հզորացնել մեղիա արտադրության հմտությունները:



## Ցուցումներ

- ա) Մասնակիցներին բաժանեք փոքր խմբերի կամ զուգերի: Սովորեք տարրեր ոլորտների հետազոտողների մասին՝ այցելելով համալսարանների կամ հետազոտական ինստիտուտների կայքեջեր: Հարցազրույցների համար ընտրեք մոտակայքում ընկալվող հետաքրքիր հետազոտողներ: Կարող եք նաև պարզել, թե արդյոք մասնակիցներն ունեն ընտանիքի անդամներ կամ ընկերներ, որոնք մասնագիտությամբ հետազոտողներ են: Նկատի ունեցեք, որ այս առաջադրանքի համար ցանկալի է բավականին շատ ժամանակ հատկացնել, քանի որ բոլոր հետազոտողները չեն, որ կարող են ունենալ հարցազրույցին մասնակցելու ժամանակ կամ ցանկություն:
- բ) Հետազոտողների հետ համաձայնեցրեք, թե ինչպես է իրականացվելու հարցազրույցը: Եթե խումբը չի կարող այցելել հետազոտողին կամ հետազոտողը չի կարող այցելել խմբին, ապա հարցազրույցը կարող եք իրականացնել ել-փոստի կամ տեսազանգի միջոցով (Skype, Google, Hangout, Facetime և այլն):
- գ) Հարցազրույցի շուրջ համաձայնության գալուց հետո, ընտրեք մինչև տաս հարց՝ հետազոտողին տալու համար: Հարցերը պետք է առնչություն ունենան հետազոտողի ոլորտի հետ: Կարող եք օգտագործել ստորև բերված օրինակները՝ հարցերը կազմելու համար:
- Անուն, մասնագիտություն և աշխատանքի վայր:
  - Ինչպե՞ս հայտնվեցիք Ձեր ներկայիս մասնագիտության ոլորտում:
  - Ի՞նչ հետազոտություն եք իրականացնում այս պահին:
  - Ինչի՞ համար կարող է օգտագործվել ինֆորմացիան: Ու՞մ համար է այն նախատեսված:
  - Ի՞նչն է ճիշտ:
  - Հետազոտողը կարո՞ղ է սխալվել կամ սխալներ թույլ տալ:
  - Ինչպիսի՞ տեղեկություններն են համարվում վստահելի և ինչպե՞ս կարող ենք գնահատել տեղեկության վստահելիությունը:
  - Ձեր հետազոտության առարկայի վերաբերյալ ինչպիսի՞ երկխոսություններ կարելի է գտնել մեղիայում: Դուք մասնակցու՞մ եք այդ քննարկումներում:
  - Գիտությունն ինչպե՞ս կբացատրեիք առաջին դասարանցուն:
- դ) Հետազոտողի հետ հարցազրույցն անցկացնելուց հետո այն ամփոփ կերպով ներկայացրեք մյուս խմբերին:

Եթե կցանկանաք, այս առաջադրանքը կարելի է ընդլայնել՝ այն տեսաձայնագրելու և դրա վերաբերյալ թվային պատմություններ ստեղծելու միջոցով: Կարող եք նաև բլոգային գրառումներ պատրաստել հարցազրույցների վերաբերյալ:

### Կարևոր է:

Եթե ցանկանում եք հետազոտողին լուսանկարել կամ ձայնագրել, հիշեք, որ սա պետք է համաձայնեցնել նախապես: Եթե վերջնական արդյունքը ցանկանում եք հրապարակել առցանց, ապա այն հաստատման համար առաջինն ուղարկեք հետազոտողին:

## 9. Քննարկում գիտության ու հետազոտությունների մասին



Ինֆորմացիան տարբեր կերպ է տարածվում մարդկանց միջև: Սոցիալական և խմբային հաղորդակցության հմտություններն օգնում են ինֆորմացիայի տարածման և դրա վստահելիության գնահատման հարցում:



Սույն առաջադրանքի նպատակն է զարգացնել սոցիալական և խմբային հաղորդակցության հմտությունները: Սա իրականացվում է ներազդեցության և երկխոսության միջոցով հաղորդակցության միջև տարբերությունների մասին սովորելու միջոցով, ինչպես նաև աշակերտներին սովորեցնելով տարբեր սոցիալական իրավիճակներում եթեկայի կանոններին համաձայն գործելու կարևորության մասին: Առաջադրանքը կարելի է որոշակի փոփոխությունների ենթարկել՝ տարբեր տարիքային խմբերին հարմարեցնելու համար:

Սոցիալական մեղիայում տեղ գտնող քննարկումները լի են բներացման և սեփական կարծիքի մեջ խճճվելու օրինակներով: Սակայն, ամենաբարձր ձայնով գոռալը սովորաբար լուծման չի հանգեցնում:

Մեր օրերում կարևոր հմտություններից են երկխոսության մեջ սերգրավվելու, մեր ունեցած տարբերությունները հարգելու և քննարկման գործընկերոջը հասկանալ փորձելու կարողությունները: Այլ մարդկանց տեսակետները հասկանալը, մյուսներին հարգելը և առկա տարբերությունների համար միայն ուրախ լինելը խաղաղության և տնտեսական աճի նախապայմաններն են: Յրավիրող հռետորաբանությունը գործիք է խմբային զրույցների համար, քանի որ դրա նպատակը բանավեճում հաղթելը չէ, այլ ընդհանուր ըմբռնում ձեռք բերելը:

## Յրավիրող հռետորաբանություն

Յրավիրող հռետորաբանությունը հաղորդակցության հրաշալի մեթոդ է կառուցողական արժեք ունեցող քննարկումների համար. այնպիսի քննարկումների համար, որ տեղ նպատակն է լսելի դարձնել բոլոր մասնակիցների ձայնը և առկա տարբերություններն ու տարբեր տեսակետները ներկայացնել որպես դրական երևոյթ: Յրավիրող հռետորաբանությունը, ինչպես հուշում է անվանումը, լսարանին հրավիրում են մուտք գործել բանախոսի աշխարհ: Լսարանը հրավերին արձագանքում է ակտիվ ունկնդրելու միջոցով, որտեղ մասնակիցները փորձում են ձերբագատվել իրենց նախապաշարմունքներից: Գործընկերոջ կարծիքը փոխելը բանախոսի նպատակը չէ, սակայն հրավիրող հռետորաբանության մեջ բանախոսը կարող է նպաստել նրան, որ մասնակիցները փոխեն իրենց մտքերն ու կարծիքները: Եթե այդպիսի փոփոխություն իսկապես տեղի է ունենում, դա կարող է լինել թե՛ լսողի, թե՛ բանախոսի, ինչպես նաև երկուսի համար ել:

ԱՎԱՆԴՎԿԱՆ	ՅՐԱՎԻՐՈՂ ՀՌԵՏՈՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ
Նպատակն է փոխել մյուսների տեսակետները:	Նպատակն է հասկանալ մյուսների տեսակետները: Փոփոխությունները կարող են վերաբերել թե բանախոսին, թե լսարանի անդամներին:
Յաղթանակ = իմ տեսակետը:	Յաղթանակ = կողմերն ունեն նոր գաղափարներ, ձեռք են բերում նոր ըմբռնում:
Յաղորդակցությունը (օր.՝ քննարկում) գործիք է նպատակին հասնելու համար:	Նպատակը հենց հաղորդակցությունն է:
Ավելի կարևոր է լինել ճիշտ, քան հաշվի առնել մյուսների զգացմունքները:	Երկուստեղ հարգանքը և գնահատանքն ավելի կարևոր են, քան մյուսներին համոզելը սեփական ճշմարտացիության մեջ:
Բանախոսը փորձում է գերիշխող դեր ունենալ հաղորդակցության ժամանակ:	Մասնակիցները ցանկանում են, որ իրենց հարցերը ուղղվեն հաղորդակցության ժամանակ:
Ամրացնում է գոյություն ունեցող ուժային կառուցակարգերը (Էլիտիզմ):	Յաղորդակցությունը փոխում է գոյություն ունեցող կառուցակարգերը (բազմաձայն լսարան, ձայնի տրամադրում լրեցված խմբերին):

Ըստ Տանյա Վալկոնենի, 2016թ. (Tanja Valkonen), Ֆոսսի (Foss) 2015թ., Ֆոս և Գրիֆին (Foss & Griffin) 1995թ.:

Աղբյուրներ՝

[blogs.helsinki.fi/kielijelppi/kuuntelijakeskeinen-esiintyminen](http://blogs.helsinki.fi/kielijelppi/kuuntelijakeskeinen-esiintyminen)

Edu.fi, Lukio koulutus, äidinkieli ja kirjallisuus, Dialogiin pyrkivä, kutsuretoriikan periaatteita hyödyntävä ryhmäkeskus-telu

Murumäki, S-T. 2017: Զիրատարակված ուսումնական նյութեր հրավիրող հոետորաբանության մասին, Յելսինսկիի համալսարան՝ տևական. 2030.fi

Վալկոնեն S. (Valkonen), 2016թ.: Kutsuretoriikka. Զիրատարակված ուսումնական նյութեր հաղորդակցության և ներգործության մասին, Յուլյասկուլյայի համալսարան (University of Jyväskylä), լեզուների և հաղորդակցության ֆակուլտետ:

## ՀՐԱՎԻՐՈՂ ՀՈԵՏՈՐԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՇՐԱԺԵԾ ԶԱՅԼԵՐ

1. Հաղորդակցության ընթացքում ձեր գործընկերներին առաջարկեք ձեր սեփական տեսակետները, դրանց նախապատմություններն ու փաստարկները:
2. Լսեք և փորձեք հասկանալ հաղորդակցության ձեր գործընկերների տեսակետները, ցույց տվեք, որ լսում եք:
3. Ստեղծեք անվտանգության, ազատության և հարգանքի մթնոլորտ:
4. Նպաստեք քննարկման ընթացքում հաղորդակցության բոլոր կողմերի տեսակետների հավասար տեսանելիության ապահովմանն ու գնահատմանը:
5. Ապահովեք, որպեսզի հաղորդակցության բոլոր կողմերը հարգվեն և լսելի լինեն:

## Ցուցումներ

### 1. Նախ մասնակիցներին բաժանեք փոքր խմբերի.

Քննարկեք միասին ազդեցություն ունենալու տարբեր ձևերը: Ներկայացրեք հրավիրող հոետորաբանությունն իր նպատակներով և անհրաժեշտ քայլերով: Միասին դիտարկեք, թե ինչ տեսակ հաղորդակցության իրավիճակներն են լավագույնս համապատասխանում: Փոքր խմբերով քննարկումներից հետո համաձայնեցրեք մի շարք կանոններ՝ հիմնված հրավիրող հոետորաբանության սկզբունքների (կիրառման համար անհրաժեշտ քայլեր) վրա:

### Խորիուրդ.

Քննարկման վարժության փոխարեն կարող եք համաձայնեցնել և պլանավորել ձեր խմբում հարգալից քննարկում անցկացնելու կանոնները: Կիրառման համար անհրաժեշտ քայլերի հիման վրա քննարկեք, թե որն է լավ գրուցք և դրա առանձնահատկությունները: Ինչու՞ է կարևոր հարգել մյուսներին և լինել բարի: Ինչու՞ պետք է բոլորի կարծիքները հաշվի առնվեն և ինչու՞ է կարևոր մյուսների տեսակետները հարգելը: Միասին կանոնները դարձրեք տեսանելի, օրինակ, դրանք նկարելու կամ լուսանկարելու միջոցով, որպեսզի հետո նորից անդրադառնաք դրանց:

## **Քննարկմանը նպաստող հարցեր.**

Ինչպիսի՞ն է անվտանգ քննարկման իրավիճակը: Ինչպիսի՞ն է անվտանգ քննարկման գործընկերը: Ինչպիսի՞ բանավոր և ոչ բանավոր ուղերձները կարող են կիրառվել՝ ստեղծելու քննարկման համար հարգալից, բաց և անվտանգ մթնոլորտ: Ի՞նչ է ակտիվ ունկնդրումը:

Հաջորդիվ յուրաքանչյուր մասնակիցն ընտրում է մեկ տեսակետ կամ կարծիք, որը կարևոր է և, հավանաբար, նաև ունի եմոցիոնալ նշանակություն նրանց համար:

Թեմաները կարող եք պատրաստել նախապես մինչև քննարկումը: Կախված աշակերտների տարիքից և խմբից՝ հարմար թեմաներ կարող են լինել հետևյալը՝

- Կլիմայի փոփոխություն, հետազոտված տեղեկությունների տեսանելիություն մեղիայում, տեխնոլոգիայի դերն առօրյա կյանքում, արհեստական բանականություն, խաղերի հետևանքները, ելեկտրական և ռոբոտ մեքենաներ:

## **2. Յրավիրող հոետորաբանության մեթոդներով քննարկման իրականացում փոքր խմբերով**

- Յուրաքանչյուր մասնակից ներկայացնում է իր կարծիքները, փաստարկները և դրանց նախապատմությունները: Մյուսները ակտիվորեն ունկնդրում են, լրացնելով հարցեր տալիս և բանախոսին քաջալերում շարունակել կիսվել իր մտքերով:
- Երբ բանախոսն արդեն ներկայացրել է սեփական տեսակետը, որը լսել են և հասկացել, դրանից հետո արդեն նրա հերթն է հարցեր տալ և լսել, թե մյուս մասնակիցներն ինչ ունեն ասելու տվյալ խնդրի վերաբերյալ:
- Տարբերվող կարծիքները չպետք է մերժվեն, հակառակը՝ դրանց արտահայտումը պետք է խրախուսվի:
- Երբ յուրաքանչյուր մասնակի տեսակետը տվյալ թեմայի մասին հնչեցվել ու քննարկվել է, խումբը պետք է միասին դիտարկի, թե ինչպիսի նոր ինֆորմացիա կառուցվեց այդ քննարկման ընթացքում: Ի՞նչ նոր բաներ է սովորել յուրաքանչյուր մասնակից:
- Նույն չափ ժամանակ պետք է հատկացվի խմբի բոլոր անդամների կարծիքները լսելու և քննարկելու վրա:

### **Խորիուրդ.**


«Ուղերձներ շշի մեջ» -  
Կարեկցանքի (Եմպաթիա)  
հմտություններ  
մեղիակրթության միջոցով:  
Այսպիսի նյութերը  
պարունակում են բանավեճի  
հոետորաբանության հետ  
կապված առաջադրանքներ:

[http://www.mediatitokoulu.fi/pullo-postia\\_en.pdf](http://www.mediatitokoulu.fi/pullo-postia_en.pdf)

### 3. Գնահատում և հետադարձ կապ

Վերջում բոլոր մասնակիցների հետ դիտարկեք իրականացված քննարկումներ: Խմբում անդրադարձեք հետևյալին՝

- արդյո՞ք բոլորի կողմից համաձայնեցված կանոնները պահպանվել են,
- արդյո՞ք բոլոր մասնակիցները ոգևորվել են,
- արդյո՞ք քննարկման ընթացքում բարձրաձայնվել են տարբեր տեսակետներ,
- քննարկումն ինչպիսի՞ զգացումներ է առաջացրել:



## 10. Գիտություն և ստեղծող քաղաքացիներ



Գիտությունը հիմնականում համալսարանների, ինչպես նաև հետազոտական հաստատությունների և ընկերությունների տիրույթն է: Տարբեր ուսումնասիրություններ, հետազոտություններ, հաշվետվություններ և զարգացման աշխատանքներ իրականացվում են նաև այլ տեղերում՝ տարբեր ընկերություններում և պետական գործակալություններում: Սակայն, շարքային քաղաքացիները նույնպես կարող են հետազոտություններ անել: Սա կոչվում է քաղաքացիական գիտություն:

Քաղաքացիական գիտության օգնությամբ հնարավոր է քրառլսորսինգի միջոցով իրականացնել խոշոր նյութերի վերլուծություն կամ կատարել դիտարկումներ և ավելի ակտիվ կերպով հավաքել համապատասխան նյութեր: Քաղաքացիական գիտության օգնության մեջ կարող ենք, օրինակ, դիտարկումներ հավաքել մոլորակների մասին (<http://www.planethunters.org/#/classify>) ինչպես նաև, օրինակ, թիթեռների կամ թռչունների տեսակներ ուսումնասիրելով կարող ենք դիտարկումներ անել տարբեր միջավայրերին հատուկ կենդանիների մասին (<http://www.zooniverse.org/projects/panthera-research/camera-catalogue/classify>) (<http://www.zooniverse.org/projects>): Մարդիկ քաղաքացիական գիտությանը մասնակից են դառնում հիմնականում տարբեր մեդիաների միջոցով, ինչպես նաև կարող են իրենց գործիքներն օգտագործել գիտական նպատակներով՝ իրենց համակարգիչների վրա տեղադրելով ծրագրեր, որոնք բարձրացնում են համակարգչային հզորությունները՝ գիտական և մաթեմատիկական խնդիրներ լուծելու համար:

Այս առաջադրանքը ներկայացնում է քաղաքացի գիտնականների կողմից իրականացված մի քանի ծրագրեր և ընդգծում է մեդիայի դերը գիտության մեջ:

## 1. Որտե՞ղ են տեղի ունենում գիտական հետազոտությունները

Սկսեք գիտությամբ զբաղվելու մասին զրույցով: Ինչպիսի՞ վայրերում են գիտությամբ զբաղվում: Թվարկեք վայրերը, որտեղ հնարավոր է հետազոտություններ իրականացնել (օր.՝ համալսարաններ, հետազոտական հաստատություններ, ընկերություններ): Յաջորդիվ ներկայացրեք քաղաքացիական գիտության գաղափարը և պատմեք, թե ինչպես յուրաքանչյուր ոք կարող է մասնակցություն ունենալ գիտության մեջ և իր օժանդակությունը բերել հետազոտողներին:

## 2. Ցանկացած ոք կարող է հետազոտության մասնակից դառնալ

Դուք կարող եք սովորել տարբեր նախագծերի մասին կամ մասնակցել դրանց: Եթե ցանկանում եք մասնակցել քաղաքացիական գիտության առևտուն ծրագրի, նախապես գտեք հարմար նախագծերի այլընտրանքներ և մասնակիցներին թույլ տվեք ընտրել իրենց ամենահետաքրքիրը թվացող տարբերակը: Յարմար նախագիծ փնտրելու համար կարող եք մասնակիցներին բաժանել փոքր խմբերի և նրանց խնդրել գտնել ամենահետաքրքիր նախագիծը:

Ի՞նչ հետազոտություն է իրականացվում նախագծի շրջանակում, ո՞վ կամ ի՞նչ կազմակերպություն է այս դեկավարում, որտե՞ղ է այս իրականացվում և ինչպե՞ս կարող են մարդիկ դրանում ներգրավվել: Դիտարկեք նաև մեդիայի նշանակությունը հետազոտության իրականացման ընթացքում: Ի՞նչ տարբեր եղանակներով են տարբեր մեդիաները կապված հետազոտություն իրականացնելու, նյութեր հավաքելու և վերլուծելու կամ հետազոտության արդյունքները փոխանցելու հետ: Յնարավո՞ր է արդյոք քաղաքացիական գիտության նախագծին մասնակցել առանց մեդիա գործիքի: Յաջորդ էջում ներկայացված են ֆինլանդիայում և արտերկրում իրականացված քաղաքացիական գիտության նախագծերի մի քանի օրինակներ:

### 3. Նախագծերի ներկայացում

Վերջում հայտնաբերված նախագծերը ներկայացրեք այնպես, որպեսզի փոքր խմբերը կարողանան համեմատել դրանց արդյունքները: Ո՞ր նախագծերն են ձեր կարծիքով ամենահետաքրքիրն ու կենսունակը: Կկարողանա՞ք և մասն նախագիծ իրականացնել ձեր համայնքում: Ի՞նչ կպահանջվի այն իրականացնելու համար: Նախագծին մասնակցելու համար ինչպիսի՞ մեջիա գործիքներ կամ կարողություններ են անհրաժեշտ:

#### Լրացուցիչ առաջադրանք

Պատրաստեք ձեր սեփական հետազոտական նախագիծը, որին կարող են բոլորը մասնակցել: Սույն ձեռնարկի հաջորդ առաջադրանքում ներկայացված են նշված հետազոտական վարժության առնչվող խորհուրդներ:

#### Լրացուցիչ տեղեկություններ և աղբյուրներ քաղաքացիական գիտության վերաբերյալ

- Քաղաքացիական գիտության տաս սկզբունքները՝ [https://ecsa.citizen-science.net/sites/default/files/ecsa\\_ten\\_principles\\_of\\_citizen\\_science.pdf](https://ecsa.citizen-science.net/sites/default/files/ecsa_ten_principles_of_citizen_science.pdf)

#### Քաղաքացիական գիտության նախագծեր Ֆինլանդիայում

- "Ֆիննական կենսաբազմազանության տեղեկատվական հաստատությունը" (<https://laji.fi/en>) մեկ վայրում հավաքում է տվյալներ Ֆինլանդիայում առկա կենդանատեսակների մասին, որը կարող է օգտագործվել հետազոտական և կրթական օպերատորների, ղեկավարության և հանրության կողմից: Երկրում առկա կենդանատեսակների դիտարկման համակարգի օգնությամբ դուք կարող եք կատարել քննության մասին դիտարկումներ և մասնակցել բուն դիտարկման և քաղաքացիական գիտության նախագծերին:
- "Sieniatlas" քաղաքացիական գիտության նախագիծը հավաքում է տեղեկություններ սնկերի տարածվածության, կենսական միջավայրի պահանջների և վտանգվածության մասին: Նախագծի նպատակն է տարածել սնկերով զբաղվելու նախասիրությունները և նույնականացնել սնկերի տեսակներ՝ այդպիսով մարդկանց մոտ հետքքրություն առաջացնելով սնկերի վերաբերյալ, ինչպես նաև ներկայացնելով իրենց դիտարկումները: "Sieniatlas"-ի միջոցով կատարված դիտարկումները գրանցվում են Ֆիննական կենսաբազմազանության տեղեկատվական հաստատության տվյալների համակարգում՝ <http://sieniatlas.fi>
- "Ֆիննական քննության լիգան" իրականացնում է Կաացեուրանտա (Kevätseuranta) անունը կրող ամենամյա գարնանային արշավ, որն ուսումնասիրում է գարնան ընթացքը գարնանային կենդանատեսակների և բուսատեսակների օգնությամբ: Ընդհանուր առմամբ ուսումնասիրվում են 41 ստանդարտ տեսակներ և նաև թեմատիկ այլ բուսատեսակներ և կենդանատեսակներ, որոնց ցանկն ամեն տարի փոխվում է: Գարնանային արշավի ընթացքում ուսումնասիրություն է կատարվում երկու ուղղությամբ՝ սկզբնական դիտարկումներ և դրանց ընդլայնում՝ <http://www.kevatseuranta.fi>

## **Միջազգային քաղաքացիական գիտության և ախազքերի օրինակներ**

- "iNaturalist" նախագիծը թույլ է տալիս գրանցել և տարածել դիտարկումներ բնության և բնական միջավայրի, այնտեղ ապրող կենդանիների, բույսերի և միջատների մասին: Դիտարկումները ցուցադրվում են քարտեզի վրա և հասանելի են հետազոտողների համար՝ <https://www.inaturalist.org>
- Ամերիկյան ՆԱՍԱ-ի "Երկրագնդի նախագիծը" հավաքում է լրացանկարներ և տեղեկություններ ամպերի մասին: Հավաքված նյութերն օգտագործվում են արբանյակների օգնությամբ ստացված տվյալների հետ համեմատելու և դրանք բարելավելու համար: Նախագծի վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների և օգտագործվող հավելվածի տեղադրման մասին ցուցումների համար այցելեք հղումներով՝ <https://observer.globe.gov/> և <https://www.globe.gov/web/science/cool/home/participate>
- 

## **Լրացուցիչ տեղեկություններ և աղբյուրներ քաղաքացիական գիտության վերաբերյալ**

- Քաղաքացիական գիտության տաս սկզբունքները՝ [https://ecsa.citizen-science.net/sites/default/files/ecsa\\_ten\\_principles\\_of\\_citizen\\_science.pdf](https://ecsa.citizen-science.net/sites/default/files/ecsa_ten_principles_of_citizen_science.pdf)

## **Քաղաքացիական գիտության և ախազքերի Ֆինլանդիայում**

- "Ֆիննական կենսաբազմազանության տեղեկատվական հաստատությունը" (<https://laji.fi/en>) մեկ վայրում հավաքում է տվյալներ Ֆինլանդիայում առկա կենդանատեսակների մասին, որը կարող է օգտագործվել հետազոտական և կրթական օպերատորների, դեկավարության և հանրության կողմից: Երկրում առկա կենդանատեսակների դիտարկման համակարգի օգնությամբ դուք կարող եք կատարել բնության մասին դիտարկումներ և մասնակցել բուն դիտարկման և քաղաքացիական գիտության նախագծերին:
- "Sieniatlas" քաղաքացիական գիտության նախագիծը հավաքում է տեղեկություններ սնկերի տարածվածության, կենսական միջավայրի պահանջների և վտանգվածության մասին: Նախագծի նպատակն է տարածել սնկերով զբաղվելու նախասիրությունները և նույնականացնել սնկերի տեսակներ՝ այդպիսով մարդկանց մոտ հետքքրորություն առաջացնելով սնկերի վերաբերյալ, ինչպես նաև ներկայացնելով իրենց դիտարկումները: "Sieniatlas"-ի միջոցով կատարված դիտարկումները գրանցվում են Ֆիննական կենսաբազմազանության տեղեկատվական հաստատության տվյալների համակարգում՝ <http://sieniatlas.fi>
- "Ֆիննական բնության լիգան" իրականացնում է Կևատսուրանտա (Kevätseuranta) անունը կրող ամենամյա գարնանային արշավ, որն ուսումնասիրում է գարնան ընթացքը գարնանային կենդանատեսակների և բուսատեսակների օգնությամբ: Ըստհանուր առմամբ ուսումնասիրվում են 41 ստանդարտ տեսակներ և նաև թեմատիկ այլ բուսատեսակներ և կենդանատեսակներ, որոնց ցանկն ամեն տարի փոխվում է: Գարնանային արշավի ընթացքում ուսումնասիրություն է կատարվում երկու ուղղությամբ՝ սկզբնական դիտարկումներ և դրանց ընդլայնում՝ <http://www.kevatseuranta.fi>

## Միջազգային քաղաքացիական գիտության նախագծերի օրինակներ

- "iNaturalist" նախագիծը թույլ է տալիս գրանցել և տարածել դիտարկումներ քնության և բնական միջավայրի, այստեղ ապրող կենդանիների, բույսերի և միջատների մասին: Դիտարկումները ցուցադրվում են քարտեզի վրա և հասանելի են հետազոտողների համար՝ <https://www.inaturalist.org>
- Ամերիկյան ՆԱՍԱ-ի "Երկրագնդի նախագիծը" հավաքում է լուսանկարներ և տեղեկություններ ամպերի մասին: Յավաքված նյութերն օգտագործվում են արբանյակների օգնությամբ ստացված տվյալների հետ համեմատելու և դրանք բարելավելու համար: Նախագծի վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների և օգտագործվող հավելվածի տեղադրման մասին ցուցումների համար այցելեք հղումներով՝ <https://observer.globe.gov/> և <https://www.globe.gov/web/science/home/participate>
- "Գալակտիկայի գազանանց" նախագծում մարդիկ տիեզերքում հայտնաբերված գալակտիկաները դասակարգում են պատկերների հիման վրա՝ [www.galaxyzoo.org](http://www.galaxyzoo.org)
- "Lingscape" նախագիծը հավաքում է դիտարկումներ և ուսումնասիրում մարդկանց բնական միջավայրում առկա տառերն ու նշանները՝ <https://lingscape.uni.lu>
- "Wildcam Darien" քաղաքացիական գիտության նախագիծն ուսումնասիրում է լուսանկարչական նյութեր և փնտրում է Պանամայի ջունգիներում յագուարների մասին դիտարկումներ՝ <https://www.zooniverse.org/projects/wildcam/wildcam-darien>

## Քաղաքացիական գիտության ծառայություններ

- "SciStarter" ծառայությունը ներառում է տասնյակ քաղաքացիական գիտության նախագծեր, որոնց կարող է մասնակից դառնալ յուրաքանչյուր ոք: Այս նախագծերը կարելի է փնտրել ըստ թեմաների և մասնակցության մեթոդների՝ <https://scistarter.com>
- "Zooniverse" ծառայությունը մեկ վայրում հավաքում է գիտության տարբեր ոլորտներում իրականացվող քաղաքացիական գիտության բազում նախագծեր՝ <https://www.zooniverse.org/about>

## 11. Եկեք ուսումնասիրենք



Ի՞նչ բույսեր և կենդանիներ կան մեր շրջակա միջավայրում: Ո՞րն է մարդկանց սիրած սնունդը: Երեխաները որքա՞ն հաճախ են երևում լուրերում: Ինչպիսի՞ տեսք ուներ աշխարհը մինչև իմ ծնվելը:

Այս առաջադրանքի ընթացքում դուք կուսումնասիրեք ձեր նախընտրած որևէ թեմա: Առաջադրանքի նպատակն է ընդլայնել պատկերացումները հետազոտություն իրականացնելու վերաբերյալ և դրա ասպեկտների շուրջ, ինչպես նաև աշակերտներին

ուղղել դեպի համակարգային և նպատակառուղված հետազոտության մեջոն: Գործողությունները կարող են հեշտությամբ հարմարեցվել մասնակիցների տարիքին և կարողությունների մակարդակին, օրինակ՝ հետազոտության թեմաներն ու մեթոդները փոխելու միջոցով:

Հետազոտությունը կարող է լինել ընդհանուր կամ ավելի փոքր խմբերի քննարկման թեման: Հետազոտության թեման կարող է, օրինակ, լինել ձեր շրջապատը, մարդկանց կարծիքներն ու տեսակետները, մերիա վերլուծությունը:

Առաջադրանքը բաղկացած է հինգ ենթաբաժիններից. 1) հետազոտության թեմայի սահմանում, 2) հետազոտության մեթոդի ընտրություն, 3) հետազոտության իրականացում և փաստագրում, 4) արդյունքների հրապարակում, և 5) իրականացված գործողություններն ամփոփող վերջնական քննարկում: Առաջադրանքը կարող է իրականացվել որպես մեկ ընդարձակ վարժություն կամ կարելի է կենտրոնական դրա կոնկրետ մասի վրա, օրինակ՝ դիտարկումներ կատարելու և շրջակա միջավայրի հետ ծանոթանալու վրա:

## Խորհուրդ.

Խորհուրդ. ավելի փոքր երեխաների հետ կարող եք կենտրոնական դիտարկումներ կատարելու, դրանք նկարագրելու, մեկնաբանելու, ինչպես նաև մյուսների հետ դրանցով փոխանակվելու և ինքնարտահայտման վրա:

### 1. Ի՞նչ է ուսումնասիրվում

- Կարող եք մտածել և ընտրել հետազոտության թեման և առարկան:
- Հետազոտության թեման կարող է լինել, օրինակ, ձեր շրջապատը, բնությունը, մարդիկ, մեղիան կամ պատմությունը: Հետազոտության առարկաները կարող են լինել արվեստի և գրականության աշխատանքներ, հարցագրույցներ, ելույթներ, ձայնագրություններ (ձայնային կամ տեսաձայնագրություններ), լուսանկարներ և պաստառներ, լուրեր, գովազդ, կամ երաժշտություն:
- Հարցերը պետք է թիրախավորեն հետազոտվող առարկան: Եթե հարցերը շատ անհստակ են սահմանված, նրանց պատասխանելը բարդ կլինի: Հետազոտության հարցերը սահմանեք այսպես, որպեսզի դրանք, օրինակ, փնտրեն նախապատմությանը վերաբերող տեղեկություններ կամ թեման դիտարկեք հարցական բառերով՝ ո՞վ, ի՞նչ, ե՞րբ, ինչպես, ինչու, որտե՞ղ:
- Ընդարձակ հետազոտության թեմային կարելի է մոտենալ նաև մի քանի տարբեր խմբերի տեսանկյունից: Օրինակ, եթե հետազոտության առարկան յութուբս է որպես տեսանյութերի ծառայություն, խմբերից մեկի հարցը կարող է լինել "Ինչպես են օգտագործում յութուբը": Մեկ այլ խմբի հարց կարող է լինել "Որքա՞ն են մարդիկ օգտագործում յութուբը", մեկ այլ խումբ կարող է հարցնել "Ինչու՞ են երիտասարդներն օգտվում յութուբից":

## 2. Հետազոտության մեթոդներ

- Հետազոտությունը կարող է լինել երկարաժամկետ ուսումնասիրություն կամ ավելի կարճաժամկետ միջոլորտային: Կարող եք որոշել երկարաժամկետ ուսումնասիրության տևողությունը, սակայն պլանավորման ընթացքում նաև պետք է հաշվի առնել ուսումնասիրության համար պահանջվող ժամանակը:
- Հետազոտության մեթոդները կարող են լինել հարցագրույցներ, հարցախույզներ, թեսթեր, դիտարկում և փաստագրում: Կարող եք, օրինակ, հաշվարկել հետազոտված առարկաները, գրանցել ձեր դիտարկումները, նկարագրել, թե ինչ է տեղի ունեցել կամ ամփոփել գլխավոր կետերը՝ օգտագործելով պատկերներ կամ բանալի բառեր: Կարող եք անել լուսանկարներ և կատարել նշումներ:
- Հետազոտության մեթոդն ընտրելիս կարևոր է դիտարկել, թե ինչպիսի տեղեկություններ կարելի են սովորել յուրաքանչյուր մեթոդի միջոցով:

## 3. Հետազոտություն և փաստագրում

- Սկսեք հետազոտությունը և հավաքեք հետազոտության համար անհրաժեշտ նյութերը:
- Հավաքված նյութերը դիտարկեք ձեր սեփական տեսանկյունից: Կարող եք, օրինակ, հաշվարկել հետազոտված առարկաները, գրանցել ձեր դիտարկումները, նկարագրել, թե ինչ է տեղի ունեցել կամ ամփոփել հիմնական կետերը՝ օգտագործելով պատկերներ կամ բանալի բառեր:
- Հետազոտության ընթացքը կարող եք փաստագրել լուսանկարների կամ նշումների միջոցով: Սա ավելի ոյուրին է դարձնում հետազոտության տարբեր փուլերին հետագայում անդրադառնալը:
- Կարող եք նաև առարկայի վերաբերյալ տեղեկություններ փնտրել այլ աղբյուրներից:

## 4. Ներկայացրեք ձեր հետազոտության արդյունքները

- Հետազոտության արդյունքներից լավագույս օգուտ քաղելու համար կարևոր է, որ դրանք ունենան բավարար տեսանելիություն և մարդիկ լսեն դրանց մասին: Հետազոտության արդյունքները կարող են հրապարակել կամ ներկայացվել տարբեր ձևերով:
- Մտածեք, թե որտեղ և ու՞մ համար եք հրապարակելու ձեր արդյունքները:
- Կարող եք, օրինակ, կիրառել գրավոր տեքստ, ձայն, պատկերներ և տեսանյութեր: Կարող եք կազմակերպել ցուցահանդես, գրել եսաեներ կամ բլոգային գրառումներ, կամ պատրաստել տեսանյութեր: Արդյունքները կարող են նաև պատկերվել որպես նկարներ, պաստառներ և տվյալների գրաֆիկներ:
- Արդյունքները հրապարակելիս նաև դիտարկեք ինֆորմացիայի վստահելիությունը: Որտեղից եք ստացել նախապատմության մասին տեղեկությունները, եթե ունեք այդպիսին: Հետազոտության արդյունքները կարո՞ղ են կիրառվել առավել լայն համատեքստում, թե՞ դրանք արտացոլում են միայն ձեր դպրոցի աշակերտների կարծիքները:

## 5. Վերջում

- Հետազոտության իրականացումը դիտարկեք մեղիա կրթության տեսանկյունից: Ո՞ր փուլերում եղավ մեղիայի կարիքը: Ինչպիսի՞ տեսք կունենար հետազոտությունը, եթե դուք մեղիային հասանելիություն չունենայիք:
- Զննարկեք նաև հետազոտության ընթացքն ու ընտրված մեթոդը: Բացի այդ, կարող եք նաև դա քննարկել խմբերում, որպեսզի մասնակիցներն առանձին նշեն հետազոտության տարրեր մեթոդների ուժեղ և թույլ կողմերը:
- Ինչպե՞ս անցավ ողջ գործընթացը: Բա՞րդ էր, հե՞շտ, հաճելի՞:

## 12. Հետազոտության վրա հիմնված մոտեցում աշխատանքային կյանքում



Հետազոտական տվյալներ գտնելը և կիրառելը կարևոր է տարբեր ոլորտներում մասնագիտական զարգացման համար: Ինֆորմացիայի հասանելիությանը գուգընթաց, աշխատանքային կյանքում աճում են նաև հետազոտության վրա հիմնված գործողությունների հնարավորությունները:

Առաջադրանքը կարող է իրականացվել որպես մասնագիտական կրթության մաս տարբեր գործողությունների միջոցով՝ մեծահասակների կրթության դասընթացներին կամ միջնակարգ դպրոցում: Այս առաջադրանքի նպատակն է ցուցադրել հետազոտության վրա հիմնված մոտեցման կարևորությունը մասնագիտական և աշխատանքային կյանքում, ինչպես նաև զարգացնել հմտություններ տեղեկություններ փնտրելու և մեղիա արտադրության ասպարեզում:

### 1. Հետազոտական տեղեկություններ աշխատանքային կյանքում

Առաջին հերթին քննարկեք վստահելի տեղեկությունների և հետազոտության վրա հիմնված մոտեցման կարևորությունը տարբեր մասնագիտությունների մեջ, ինչպես նաև աշակերտների սեփական ուսման տեսանկյունից: Ի՞նչ կարևորություն ունի վստահելի ինֆորմացիան տարբեր ոլորտներում: Ի՞նչ մասնագիտություններում է, ըստ ձեզ, հետազոտության վրա հիմնված մոտեցումը հատկապես կարևոր: Մտածեք նաև մի քանի օրինակների մասին առ այս, թե ինչու և ինչպիսի իրավիճակներում է հետազոտված և վստահելի ինֆորմացիան չափազանց կարևոր: Ի՞նչ հավանական ռիսկեր կամ ինդիրներ կարող են առաջանալ, եթե վստահելի ինֆորմացիան անտեսվի:

### 2. Հետազոտական ինֆորմացիա փնտրություն և վերլուծություն

Այսուհետև մասնակիցներին բաժանեք փոքր խմբերի և խնդրեք նրանց գտնել հետազոտություն կամ հոդված իրենց իսկ ոլորտում իրականացված հետազոտության վերաբերյալ կամ իրականացված այնպիսի ոլորտում, որը կարող է նրանց հե-

տաքրքրել հետագայում: Յետազոտությունների մասին նորություններ կարելի են գտնել թերթերում, ամսագրերում, ինչպես նաև տարբեր ոլորտներին վերաբերող հրատարակություններում: Յոդվածները գտնելուց հետո խնդրեք նրանց վերլուծել հետազոտության ամենակարևոր տեղեկությունները:

- Ո՞րն է հետազոտության թեման և ի՞նչն է ուսումնասիրվել:
- Ո՞վ է իրականացրել հետազոտություն:
- Որո՞նք են հետազոտության հիմնական արդյունքները:
- Ինչպե՞ս է հետազոտությունը ներկայացվել լուրերում:
- Յետազոտության արդյունքներն ինչպե՞ս կարող են նպաստել ոլորտի աշխատանքներին և ինչպե՞ս կարող են, ըստ ձեզ, կիրառվել:

### 3. Ինֆորմացիայի փոխանակումը տարբեր ճանապարհներով

Յետազոտությունների վերաբերյալ տեղեկություններ փոխանակելու շատ տարբեր ձևեր կան: Յաջորդիվ խմբին տվեք մի առաջադրանք, որտեղ նրանք պետք է հետազոտության արդյունքները "թարգմանեն" մեկ այլ "մեղիա լեզվով": Նպատակն է հետազոտության հիմնական տեղեկությունները փոխանակել այլոց հետ՝ գրելու, վիզուալ բաղադրիչների, լուսանկարների, ձայնագրության կամ տեսանյութի միջոցով: Կարող եք նաև մտածել այն մասին, թե ինչպես կարող եք հետազոտության ինֆորմացիայով կիսվել սոցիալական մեդիայի տարբեր հարթակներում:

### 4. Վերջնական քննարկում

Վերջում դիտարկեք հետազոտության տեղեկությունների մատչելիությունը և դրա կիրառման նշանակությունը: Յետազոտության մասին տեղեկություններ փնտրելը բա՞րդ էր: Ո՞ր տարբեր աղբյուրներից է ձեր կարծիքով, ինֆորմացիա գտնելն ամենահեշտը: Յետազոտության մասին տեղեկություններով կարող եք փոխանակվել ամենատարբեր եղանակներով: Ի՞նչ ձևաչափով եք նախընտրում ստանալ տեղեկություններ: Ինչու՞ է, ըստ ձեզ, կարևոր աշխատանքային կյանքում հետազոտության ինֆորմացիային ուշադրություն դարձնելը:

Սույն ուսումնամեթոդական ձեռնարկը թարգմանվել է  
Հանրային լրագրության ակումբի "Ավելի անվտանգ առցանց միջավայր.  
Նախադպրոցական հաստատություններում մեղիագրագիտության ուղղությամբ  
միջամտություն" ծրագրի շրջանակներում,  
որը Փինանսավորվել է ԱՄՆ պետքարտուղարության  
Հասարակայնության հետ կապերի գրասենյակի  
դրամաշնորհի շրջանակներում:

Այս ուսումնամեթոդական ձեռնարկը տարածելիս  
Հանրային լրագրության ակումբին հղում կատարելը պարտադիր է:

ՐԼԸ կոնտակտային տվյալներ՝

Կայք՝ <https://pjc.am/>  
Էլ. հասցե՝ [info@pjc.am](mailto:info@pjc.am)  
Հեռ.՝ +37412 755898, +37499 755 89